

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

«ՀՈՎԻՏԱԿԱՆ ՍՐԻՆԳ»

Կրօնական փերթուածներու սիրուն հասարակ մը տիտղոսն է առ, որ այնքան խորհրդաւոր պիտի հնչէ՝ որչափ զանգակի մը զօղանջը գիշեր ժամանակ:

Սոյն գեղահիւս հաւաքածոն արդիւնք է իզմիրի Առաջնորդ Տ. Եղիշէ եպս. Գուրեանի գրչին: Գրագէտ Սրբազանը շատոնց ցոյց տուած է արդէն բանաստեղծական ներքին խանդ մը, թէ և չափաւոր: Իր ոտանաւորները չունին արդի քերթողներու ստեղծած յարափոփոխ չափերը, այլ միշտ՝ կանոնաւոր են անդամոց բաժանումն ու յանգերը թէ՛ ինքնագիր և թէ՛ թարգմանածոյ քերթուածներուն մէջ: Ընդհանրապէս անոնք հեզասահ առուակի մը խոխոջն ունին, քան սրընթաց ու փրփրազէզ գետի մը վազքը:

Գրքին սկիզբը յատաջարանի տեղ դրուած է իր մէկ նամակը, ուղղուած՝ առ իւր «Սիրելի և սգաւոր բարեկամ»ը. նամակ մը՝ որ կարդալէզ վերջ նամակագրութեան գրքի մը մէջ՝ Մխիթարականներու շարքին պիտի դնես, այդ կարգի թղթակցութեանց իւր ընտիր օրինակ, եթէ երբեք այդպիսի գործի մը զազափարն ունենաս. այնքան ազդեցիկ և սիրուն է անոր ոճը: «Հովուական Սրինգ»ը կը բովանդակէ երեսունը չորս ոտանաւորներ, 1904էն մինչև 1907 գրուած: Ասոնցմէ ամենէն ընտիրները են «Խաչը» (էջ 73) «Ապրտած երազ մը» (էջ 28). «Մի՛ մերձեցա՛ր յիս» (էջ 43) «Եւմուտուի ձամբողքները» (էջ 53). «Յողայի համբոյրը» (էջ 85) և «Պատանգ»ը (էջ 89). Հեղինակը իր յաջողակ մտքին ցլացումը կը պատկերէ զընթացաւորապէս իր այս ոտանաւորներուն մէջ, բառերու շարքն իսկ շատ անգամ ազդեցութիւն կ'ընէ ընթերցողին վրայ: Յանգերն ընդհանրապէս, բնական եկած են քան բռնադատեալ, ուստի խոյս տուած է իմաստի խանգարում պատճառելէ: Սա-

կայն կը փափագինք քանի մը դիտողութիւններ դնել, վստահ ըլլալով Գերապ. Սրբազանին թոյլտուութեանը: Սոյն այս գեղատիպ ոտանաւորներուն մէջ և շաղկապին տեղ սովորաբար ոչ կը գործածուի. մինչ գուցէ լաւագոյն պիտի ըլլար ձայնաւորով սկսող բառերուն առջև և զընելը, և ուն՝ բաղաձայններուն առջև. այս հիմը հաստատելէ վերջ տնօրինել ուր որ հարկ տեսնուի. ըստ իս միջոց մ'է գոնէ միակերպութենէ խուսափելու: Ասկէ դուրս մերթ ընդ մերթ անդամատութիւն կը կատարուի չ երու վրայ, և ասով տողին ուժը կոտրելով՝ կը զրկուի վայելչութենէ մը. զոր օրինակ.

Ու այդ ուժը, այդ կամքն ու խօսք. էջ 3:
Ու երախը լորձ մը հողի. էջ 5:
Նայեցաւ Տէրը վրտակ ու անխող, էջ 24:
Աւ հրգոյր շունչը յայտնութեան հոգսի. էջ 24:

Փոքրիկ դիտողութիւննիս «Յուդայի Համբոյր»ի մասին չէ, ուր մասնաւոր ուշադրութեամբ ընդ վերջացուցած է յանգերը, զոր արդէն հիմայ շատերն ալ կ'ընեն: Տ. Եղիշէ եպիսկոպոս որչափ որ չէ կրցած բոլորովին խոյս տալ տողերու անյաւոյ շարքերէ ինչպէս.

Քիզի հետ ալ զմայլումով մը անփոք. էջ 33:
ձմեռած սրբախ՝ որ դեռ կ'մորմորէ էջ 38. եայլն.

Սակայն իր ընդհանուր քերթուածները իմաստաւոր են. և արդէն այս ցնցոյշ հասարակով չէ որ կ'ըմբռնենք Նորին Գերապատուութեան եռանդուն և անխոնջ գրասիրութիւնը. ինքը քերթող և արձակագիր է միանգամայն, ու մատուցած աշխատութիւնները ազգիս դպրոցական Հաստատութեանց ալ օգտակար եղած են և պիտի ըլլան:

Իր «Հովուական Սրինգ»ի հրատարակութիւնը մասնաւոր նպատակ մ'ալ ունի, այսինքն գրքին հասոյթը ի նպատակ սովորչոյ յատկացուած է:

Գուրեան Սրբազանի այս բարեգործական նպատակն ու ձեռնարկը՝ անհագամ մ'ալ ցոյց կու տայ իր ազգասիրական ոգին:

Հ. Ղ. ՏԱՅԵԱՆ